ԱՂԱԲԵԿ ԴԱՎԹՅԱՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂԸ

19 ՀԱՅՊԵՏՀՐԱՏ 49

ԱՂԱԲԵԿ ԴԱՎԹՅԱՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂԸ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ՀԱԿԵՄ ԿԵՆՏԿՈՄԻՆ ԿԻՑ ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ 1949

Տպիչը և գլխագրողը
Ա.Շ. ՄԱՄԱԶԱՆՅԱՆԻ

А. ДАВТЯН
СМЕНА
(на армянском языке)
Армгиз, Ереван, 1949

ՓՈԽԱՐԻՆՈՂԸ

Այդ առավոտ կարծես եղանակն էլ նպաստում էր Վարսիկի տրամադրությանը: Այնպե՞ս պայծառ առավոտ էր, այնպե՞ս ուրախ...

Արևի շողքը ներս էր ընկել պատուհանից ու խաղում էր հայելու առաջ սանրվող Վարսիկի թուխ, փարթամ մազերի, բարակ, նուրբ իրանի ու երկար, սև թարթիչների հետ: Աչքերը եղեգնուտի մեջ թաքնված լճեր էին հիշեցնում, որոնց վերևից բացվել էին երկար հոնքերը, ինչպես թռչող ծիծեռնակի թևեր: Բարակ շրթունքների վրա հավաքվել ու մի փունջ ժպիտ էր դարձել նրա դեմքով մեկ ոսկեված ուրախությունը, իսկ ծնոտի ծայրին կարծես մեկը մատով զգույշ հպել ու փոսիկ էր թողել: Այդպիսի փոսիկներ առաջանում էին նաև նրա այտերին, երբ ժպտում էր... բայց ե՞րբ չէր ժպտում: Նույնիսկ քնած ժամանակ նրա շուրթերի արանքից ցոլում էին մանրաշար, սպիտակ ատամները:

Բայց այս առավոտ Վարսիկն արտասվա՛ծ ուրախ է։

Չէ՞ որ նա հաջողությամբ տվեց բոլոր քննությունները ու գովասանագրով ավարտեց յոթերորդ դասարանը։

Հե՞չ եք կարծում առաջին դասարանից մինչև յոթերորդ դասարան հասնել մի՛շտ դերազանցիկ ու հանկարծ...

Բայց չէ՞ որ դեռևս մանկապարտեզում եղած ժամանակ դաստիարակները հիացմունքով էին խոսում նրա ընդունակությունների մասին։ Հաղորդվող երգը, ոտանավորը, հեքիաթը, պարը առաջինը Վարսիկն էր սովորում։ Իսկ հետո, երբ տուն էր գալիս, երգում էր, բերանով նվագում, կամ պարում՝ միաժամանակ իրեն դիտելով մեծ հայելու մեջ։ Երբ դրանից էլ հոգնում էր, սկսում էր արտասանել... ու այնքա՛ն լավ էր արտասանում, այնքա՛ն լավ... Այդ էր պատճառը, որ հաճախ մանկապարտեզներում նրան բեմ էին հանում ու հիացմունքով լսում։

Սակայն այդ տարիներին Վարսիկի ամենասիրելի զբաղմունքը տիկնիկն էր։ Նա քնեցնում էր նրան, արթնացնում, հագցնում, հետը խոսում, հարցեր տալիս ու տիկնիկի փոխարեն էլ ինքը պատասխանում հարցերին։ Ապա նստեցնում էր ծընկանը ու երգելով խաղացնում։ Այն, ինչ որ անում էին իր հետ՝ հայրիկն ու մայրիկը, ինքն էլ նույնն անում էր տիկնիկի հետ. հանում էր նրա շորերը, լվանում, հարթուկում ու նորից հագցնում։

Վարսիկի բոլոր հագուստները հայրիկն էր կարում, իսկ ինքը՝ Վարսիկն էլ կարում էր տիկնիկի հագուստները։ Նա հայրիկի նման սանտիմետրը

գցում էր վզովը, մի քանի հատ ասեղներ ամրացնում կրծքին, մատնոցը դնում էր մատին ու մկրատն առնելով սկսում էր «հագուստներ ձևել» մայրիկի տված շորերի կտորներից: Եվ նա այդ անում էր կավիճով կտորների վրա գծիկներ քաշելով ու քթի տակ որևէ երգ երգելով, անպայման երգելով, ինչպես հայրիկն էր անում:

Այսպես Վարսիկը դբաղվում էր մինչև հայրիկի տուն դալը: Իսկ նրա տուն դալուց հետո նա նստում ու նայում էր, թե ինչպես է հայրիկը սանտիմետրով չափում, կավիճով գծեր քաշում ու մկրատով կտրտում նախշուն կտորները: Վարսիկն այնպե՛ս ափսոսում էր, այնպե՛ս... Բայց հետո հայրիկը դրանք միացնում էր և կարում, պատրաստում դեղեցիկ, դեղեցիկ հագուստներ: Վարսիկն ուշադիր հետևում էր հայրիկի աշխատանքին, որպեսզի հետո ինքն էլ նրա նման կարի ու հագցնի տիկնիկին:

Այսպես անցան տարիներ: Վարսիկը մանկապարտեզից անցավ դպրոց ու մինչև յոթերորդ դասարան հասնելը միշտ փոխադրվեց գովասանագրերով: Միաժամանակ չդադարեց հայրիկին ընդօրինակել և նույնիսկ արդեն կարողանում էր իր համար շոր կարել:

Հայրիկը մի օր դարմանքով նկատեց, որ սոջիկը կարգին ձևարար է դարձել:

— Սդջի՛կս,— իր սովորության համաձայն նրա դլխի ժապավենի հետ խաղալով ու մազերը համբուրելով կատակեց հայրիկը,— դու, ըստ երևույթին, որոշել ես կարել իմ հացը:

Ի պատասխան հայրիկի փաղաքշանքի, Վարսիկը իր սիրած ձևով երկու ձեռքերով փաթաթեց նրան ու այտը դրեց նրա երեսին:

Այդպես ամեն ինչ լավ ու խաղաղ էր ընթանում, սակայն մինչև յոթերորդ դասարանը: Ա՛յ, այս աշնան, երբ դպրոցներում ամփոփում էին ուսման առաջին քառորդի արդյունքները, պարզվեց, որ Վարսիկը «4»-եր էլ ունի:

Այս բանը և՛ զարմացրեց, և՛ շատ վշտացրեց նրա ծնողներին: Վարսիկն էլ շատ վշտացավ: Նա ինքն էլ չհասկացավ, թե այդ ինչպե՞ս տեղի ունեցավ: Ու նա ամաչում էր հատկապես հայրիկից, որը միշտ գոհ էր եղել աղջկանից ու այժմ էլ այդ մասին թեև չէր խոսում, բայց Վարսիկն զգում էր, որ դժգոհ է իրենից:

Մի օր արտելից տուն դառնալով հայրն ասաց.

— Վարսիկս, արի սոցմրցման մեջ մտնենք: Ես իմ պլանները կատարեմ կրկնակի չափով, իսկ դու քո բոլոր առարկաները սովորիր միայն «Ց»-երով:

Վարսիկն ուրախացավ, որ վերջապես հայրիկն այդ մասին խոսք բացեց: Նա առանց այդ էլ արդեն ինքն իր մեջ որոշել էր «4»-երը վերացնել, միայն նրան ճնշում էր հայրիկի լռությունը: Եվ այժմ հայրիկի առաջարկը լսելով, ձեռքի գիրքը գրեթե նետեց սեղանին ու վեր թռավ, բացագանչելով.

— Հա՞... լա՛վ: Շա՛տ լավ, հայրիկ ջան:

Ապա ձեռքով հարդարեց սև, փարթամ մազերն ու հոքը մոտենալով երկու ձեռքով գրկեց նրա վիզը, երեսը դրեց նրա երեսին ու հարցրեց կոմիկական տոնով.

— Իսկ հաղթողին ի՞նչ տանք:

— Ի՞նչ... Հա՛, ճիշտ ես ասում,— մտքի մեջ ընկած, ասաց հայրիկը:— Այդ էլ որոշենք:

Եվ նա սկսեց մտածել, թե ի՛նչ հարմար բան կարելի է տալ:

— Հա՛,— խոսեց նա վճռական տոնով,— եթե

դու հաղթեցիր, քեզ համար մի ընտիր դերիա կկարեմ, իհարկե, ժապավենը հետը, և պիոներական համբաւ կուղարկեմ. իսկ եթե ես հաղթեցի՞...

Հայրիկը լռեց, մտածեց ու մատների ծայրով աղջկա այտերը սեղմելով, ասաց.

— Այդ էլ արդեն դու ասա:

— Մա՛,— դյուխր բարձրացրեց Վարսիկն առանց ձեռքերը հոր վզից վերցնելու,— ես ի՞նչ ասեմ:

Մայրը, որ լսում էր նրանց խոսակցությունը ու հրճվում, ժպտալով պատասխանեց.

— Դո՞ւ: Դու էլ մի գովասանագիր բերես հայրիկիդ համար:

— Հա՞— հոնքերը վերև քաշելով դեպի հայրը դարձավ Վարսիկը:

— Լա՛վ, համաձայն եմ: Ուրեմն պայմանը՝ պայման է:

— Ո՛չ, ո՛չ,— հայրիկի վիզը թողնելով գրեթե ճչաց Վարսիկը,— պետք է պայմանագիր գրել, ստորագրել:

— Այո՞... Շա՛տ լավ: Գրե՛նք:

Եվ հայրիկը մոտեցավ գրասեղանին պայմանագիր գրելու:

Երբ հայրիկը նստեց ու սկսեց գրել, ներս մտավ Վաչեն՝ մարդատ Արշակի աշակերտը: Նա երևի եկել էր տանն աշխատելու, վարպետին օգնելու, ինչպես անում էր հաճախ:

— Բարև՛ ձեզ:

— Բարև՛, համեցե՛ք, Վա՛չե,— խոսեց Վարսիկի մայրն ու ավելացրեց.— ա՛յ, լավ է, Վաչեն էլ եկավ, թող նա էլ վկա լինի:

Վաչեն անտեղյակ մարդու անորոշ ժպիտով նայեց նրանց ու ասաց.

— Ի՞նչը... Ի՞նչ կա, տիկին Սոնա:

— Հա՛, արի, խկապես,— մինչամեց հայրիկը դրելն ընդհատելով։

— Ի՞նչ կա, ուստա։ Ինչի՞ մասին եք խոսում։

— Ա՛յ, լսի՛ր,— Վաչեին գաղտնի աչքով անելով խոսեց վարպետ Արշակը,— ես ու Վարսիկը պայմանագիր ենք կնքում...

Եվ հայրիկը Վաչեին ծանոթացրեց սոցմրցման պայմանագրին, կարդալով այն։

— Շատ լավ է,— ասաց Վաչեն դեմքին խիստ լրջություն տալով։

Եվ այդպես, պայմանագիրը կնքվեց։

Այդ աշնանն էր։ Դրանից հետո Վարսիկի հայրիկը հաճախ հիշեցնում էր պայմանագրի մասին։ Վաչեն էլ ամեն գալով (իսկ նա գրեթե ամեն երեկո գալիս էր նրանց տուն) ստուգում էր Վարսիկի օրագիրը։

— Չէ՛, ուստա՛, աղջիկդ տանելու է։

— Չի կարող,— Վարսիկին գրգռելու տոնով ասում էր հայրիկը՝ ձեռքի սանտիմետրով առաջը դրած կտորները չափելով,— չի՛ կարող։ Դեռ ո՞ւր են... քննություններ՝ր... բան...

— Դե լա՛վ,— սրտանց աջ ձեռքի բուռնցքը ձախ ափին խփելով ասում էր Վարսիկը,— կտեսնե՛նք։

Տիկին Սոնան, Վաչեն ու վարպետ Արշակը գաղտնի հրճվում էին, ապա Վաչեն սկսում էր օգնել վարպետին, ինքն էլ նրա նման մատնոց հագնելով ու սանտիմետրը վզովը գցած։

— Տեսնո՞ւմ ես, Վարսի՛կ,— ասում էր Վաչեն աշխատանքը շարունակելով,— հայրիկդ սոցմրցումը շահելու համար տանն էլ է աշխատում։

— Ե՛ս էլ եմ աշխատում,— ոգևորված պատասխանում էր Վարսիկը։

Նա դասերը սովորելուց հետո հաճախ մոտենում էր աշխատող հորն ու Վաչեին և դիտում նրանց աշխատանքը: Նա նայում էր, թե ինչպես հայրիկը չափում է, կավիճով նշանակում, շարունակ բացատրելով նաև Վաչեին: Հետո մեծ մրկրատով կտրում էին կավիճով քաշած գծերով՝ խր՛թ, խր՛թ, խր՛թ... Վարսիկին թվում էր, թե իրենց երկրաչափության դասին նկարած մարմինների ձևերն են կտրում հայրիկն ու Վաչեն: Կտրելու ժամանակ նա զարմացած նայում էր Վաչեի դեմքին, որը մկրատի շարժման տակտով բաց ու խուփ էր անում բերանը, կարծես ինչ-որ սմուր բան կար ատամների տակ:

Վարսիկը վաղուց հրաժարվել էր տիկնիկից, բայց շորեր ձևելու և կարելու սերը մնացել էր սրտում անմոռաց: Նա առաջվա նման զբաղվում էր հայրիկի արհեստով, չնայած դա ծնողների կամքին հակառակ էր:

— Ուշքն ու միտքը քո արհեստի վրա է,— Վարսիկից գաղտնի ասում էր տիկին Սոնան ամուսնուն:

— Բայց դու տեսնո՞ւմ ես, կարդին վարպետացել է,— զարմացած ասում էր վարպետ Արշակը:

— Բա՛, —փառասիրությամբ շեշտում էր տիկին Սոնան, —Վաչեից լավ է ձևում:

— Ոչի՛նչ, դա էլ վատ գործ չէ, բայց միա՛յն ուսումն ավարտելուց հետո թույլ կտամ զբաղվելու դրանով... Մի ձեռքով երկու ճմերուկ չես բռնի:

Այսպես անցան օրեր, ամիսներ, եկավ ուսումնական տարվա վերջը: Եվ ահա, Վարսիկը տարեվերջի բոլոր քննությունները հանձնեց «Ճ»-երով:

Երեկոյան, երբ վերջին քննությունը տված, Վարսիկը դիմավորեց արտելից եկող հորը, հայրը նրան հանձնեց խոստացած նոր դերիան ու ասաց.

— Շնորհակալ եմ, Վարսիկս: Տարար: Վաղը միասին գնանք խանութները, ինչ որ պետք է՝ դնենք, որ դնաս ճամբար:

Վարսիկը չմացավ ինչ ասի: Նա չիկնած փարվեց հոր վզով, համբուրեց նրան ու երեսը դրեց նրա երեսին:

Եվ ահա այժմ, այս պայծառ կիրակի առավոտը, նա ուրախ-ուրախ հագնվում էր, որ հայրիկի հետ գնա խանութները: Նա հագել էր նոր դերիան, և թվում էր, թե ոտքերը գետնին չեն դիպչում... Ու արևն էլ Վարսիկի պես ուրախ խաղում էր նրա հետ:

Վարսիկը սանրվեց, կապեց անբաժանելի կարմիր փողկապը, առանց որի նրան թվում էր, թե հագուստները լրիվ չեն, ապա դլխի ձախ կողմում, փարթամ մազերի մեջ ամրացրեց հայրիկի սիրած սպիտակ թիթեռանման ժապավենը, որը նույնպես նոր էր, հայրիկն էր բերել դերիայի հետ:

Վարսիկն արդեն ամեն ինչ վերջացրել էր, բայց հայրիկը դանդաղում էր: Նա գրասեղանի մոտ նստած ինչ-որ բան էր կարդում:

Վարսիկը հագնված, պատրաստ մոտեցավ հորը ու ձեռքի թուղթը ցույց տալով, հարցրեց.

— Այ ի՞նչ է:

Ճիշտն ասած, Վարսիկին չէր հետաքրքրում, թե ինչ է կարդում հայրիկը: Նա ուղղակի ուզում էր հոր ուշադրությունն իր վրա հրավիրել, որ հայրիկը տեսնի, թե ինչքան լավն է ինքը՝ Վարսիկը: Հայրը նայեց աղջկան վարպետի ստուգող հայացքով, գննեց դերիան ու ժպտալով ասաց.

— Շնորհավո՛ր: Լավ է նստում:

— Այդ ի՞նչ է,— այժմ արդեն խոսակցության նյութը փոխելու նպատակով իր հարցը կրկնեց Վարսիկը։

— Սա՞... անկեստա է։

— Ի՞նչ անկեստա։

— Պարտիայի թեկնածու ընդունվելու։

— Վա՛,— ձեռքերն իրար խփելով, իր զվարթ ձայնով կչկչաց Վարսիկը,— նոր է ուզում ընդունվել։ Իսկ ես արդեն կոմերիտական եմ։

— Դե, դրա համար էլ հաղթեցիր,— ժպտաց հայրիկը։

***

Երբ գնումները կատարած, Վարսիկն ու հայրիկը տուն էին վերադառնում, հրապարակում, ռադիո բարձրախոսի մոտ հավաքված մեծ բազմություն տեսան։

«Կիրակի է, լավ համերգ են լսում»,— ենթադրեց Վարսիկը, բայց և անմիջապես զարմանքով նկատեց, որ երաժշտություն չի լսվում, ռադիոն խոսում էր։ Հայրիկն ըստ երևույթին նույնպես հետաքրքրված մոտեցավ իմանալու, թե ինչո՞ւ են հավաքվել, ի՞նչ են հաղորդում։

Բայց հենց այդ ժամանակ ռադիոն ընդհատեց խոսելը։

— Տեսա՞ք... լսեցի՞ք, ուստա,— դեպի Վարսիկի հայրը դառնալով հուզված հարցրեց կանգնածներից մեկը։

— Ի՞նչը։

— Բա չլսեցի՞ք։ Էս դիշեր Գերմանիան հարձակվել է մեր երկրի վրա... պատերազմ...

— Ո՞նց թե,— չչնչաց վարպետ Արշակը։

— Բա՛։ Մոլոտովն էր խոսում։

Վարսիկը նկատեց, որ հայրը մռայլվեց... նա

կարծես մոռացավ իրեն՝ Վարսիկին, ու չտապեց դեպի տուն: Վարսիկն աշխատեց չխանդարել նրան ու նրա ետևից քայլեց դղրդյուն ու լուռ: Նա գնում էր և մտածում լսածի մասին... «Պատերազմ... Գերմանիան հարձակվել է... (Նա հիշեց քարտեզի վրա Գերմանիայի տեղը): Հետո ի՞նչ... հարձակվել է... քիմքն ու մռուքը կկարդեն ու ետ կուղարկեն...»

Այսպես մտածելով, հայրիկի ետևից լուռ քայլում էր Վարսիկը. «Բայց ինչո՞ւ մռայլվեց հայրիկը...»:

Տուն հասնելուն պես հայրիկը լսածի մասին հայտնեց տիկին Սոնային:

— Վո՛ւշ,— մղկտաց մայրիկն ու երկու ձեռքերով խփեց ծնկներին,— էս ի՞նչ բան էր:

Հայրիկը չտապեց դուրս:

— Գոնե մի բան ուտեիր,— անվստահ ասաց մայրիկը:

— Չէ՛, ժամանակ չկա:

Երբ հայրիկը գնաց, տիկին Սոնան նորից խփեց ծնկներին ու շշնջաց.

— Քոռանամ ես, էս ի՞նչ դժբախտություն էր,— ու թուլացած նստեց աթոռին:

Վարսիկն թվաց, թե մայրիկն էլ մոռացավ իրեն:

— Մա՛,— իր սիրած կարճ ձևով դիմեց Վարսիկը,— ո՞ւր գնաց հայրիկը:

Մայրիկը ցրված հայացքով նայեց նրան ու շշնջաց.

— Կոմխարիատ:

— Կոմխարիա՞տ: Ինչո՞ւ:

— Բա չիմացա՞ր...

— Իմացա: Իսկ հայրիկն ի՞նչ գործ ունի...

— Ո՞նց թե,— կարծես զարմացավ մայրը,—

խակ քո կարծիքով ո՞վ գործ ունի: Բա թշնամին ո՞ւմ վրա է հարձակվել: Մենք բոլո՛ր էլ գործ ունենք... բոլոր:

Եվ մայրիկը չարունակեց ծնկները ծեծել՝ ինքն իրեն կրկնելով՝ — Բոլո՛ր... բոլո՛ր...

Վարսիկը տխրեց: Նա գրքերում կարդացել էր պատերազմների մասին, պատմությունից էլ անցել էր, բայց չէր կարծում, թե պատերազմն այդքան սարսափելի բան է:

Ու այսպես խանգարվեց Վարսիկի ճամբար գնալու ծրագիրը: Գնումները մնացին անուշադրության մատնված: Իսկ հաջորդ օրը հայրիկը նրան համբուրեց ու ասաց.

— Ես գնում եմ, Վարսիկս... Իսկ դու... ի՞նչ ասեմ... դպրոցը չթողնես... լավ սովորիր, լսո՞ւմ ես... կդամ ես...

Վարսիկը լավ նկատեց, որ հայրիկը շատ բան էր ուզում ասել, բայց չկարողացավ, հուզմունքը թույլ չտվեց: Նա նկատեց, որ հայրիկը հազաց՝ հուզմունքը թաքցնելու նպատակով: Եվ այդ էր պատճառը, որ Վարսիկը մի տեսակ անզգայացավ: Նա նույնիսկ չհամբուրեց հայրիկին: Միայն երբ մայրիկն էլ հայրիկի հետ տանից դուրս եկավ, նա աղաղություն տվեց արցունքներին...

Այսպես հայրիկը գնաց...

***

Առաջին ամիսները Վարսիկն ու մայրիկը հաճախակի նամակներ էին ստանում հայրիկից: Նա գրում էր, որ ամեն ինչ լավ կլինի, որ մենք կհաղթենք, որ թշնամու հաջողությունները ժամանակավոր են: Գրում էր, որ՝ Վարսի՛կ, լա՛վ սովորիր,

չուտ–չուտ նամակներ գրիր։ Հետո, որոշ ընդմիջումից հետո գրեց, որ՝ վիրավոր պառկած է հիվանդանոցում, բայց վերքերը թեթև են, շուտով էլի ճակատ կդնա։ Այս նամակը Վարսիկը թաքցրեց մորից։ Բայց հենց այդ նամակն էլ եղավ վերջինը։

Անցան ամիսներ, իսկ հայրիկից՝ ո՛չ մի լուր։ Նրա թողած անկեռան, որ բերել էր պարտիայի անդամության թեկնածու ընդունվելու համար, մնում էր դրասեղանի վրա, առանց լրացնելու։ Վարսիկն այն վերցրեց ու հայրիկի մկրատի, սանտիմետրի ու մատնոցի հետ պահեց։ «Երևի մի օր կգա, կլրացնի»,— մտածեց նա։

Իսկ դպրոցում նա առաջվա նման գերազանցիկ էր։ Նույնիսկ է՛լ ավելի լավ էր սովորում։ Նրա ականջին շարունակ հնչում էին հայրիկի խոսքերը՝ լավ կսովորես։ Արտաքուստ կարծես՝ ո՛չ մի փոփոխություն տեղի չէր ունեցել նրա կյանքում։ Էլի՛ նույն Վարսիկն էր, նույն մաքուր, ճաշակով հագնվողը, անբաժան փողկապը վզին ու հայրիկի սիրած սպիտակ թիթեռանման ժապավենը մազերի մեջ։ Էլի՛ դպրոցում կազմակերպվող միջոցառումներում եռույթ էր ունենում ու բոլորին հուզում իր շնորհալի արտասանությամբ։

Բայց այդ միայն արտաքուստ էր։ Ներքուստ մի մեծ վիշտ կրծում էր նրա սիրտը. «Ի՞նչ եղավ հայրիկը, ինչո՞ւ չի գրում»։ Եվ ինչե՛ր չէր անցնում նրա մտքով։ Պատկերացնում էր հայրիկին, իր այնքա՛ն լավ հայրիկին, գնդակից խոցված ու ընկած ամայի դաշտում... կամ երևակայում էր նրան վիրավոր վիճակում... Ահա նրան մուտենում է մի ֆրից ու...

Եվ Վարսիկի աչքերից զայրույթի արցունքներ էին ցայտում։ Այդպիսի բոպեներին նա նախանձում էր իր երկու մտերիմ ընկերուհիներին՝ Անու-

չին ու Նորային, որոնք թե՛ սովորում էին իր հետ, թե՛ կամավոր էին դրվել Կարմիր խաչում ու հաճախ գնում էին հիվանդանոցները՝ վիրավոր մարտիկներին խնամելու: Կամ, երբ սանիտարական գնացք էր կայարան դալիս, գնում էին, օգնում վիրավորներին տեղափոխելու: Այո՛, նա նախանձում էր ընկերուհիներին, որ նրանք օգնում, օժանդակում են հայրենիքին... իսկ ինքը... Նա մեկ ուզեց միանալ նրանց՝ Կարմիր խաչում կամավոր դրվել, մեկ էլ անհարմար զգաց. եթե դրա կարիքը լիներ, ընկերուհիները կհայտնեին իրեն: Ուրեմն՝ հարկավոր է մի այլ կերպ, մի այլ ձևով ցույց տալ իր օգնությունը:

Վաչեն հաճախ այցելում էր նրանց: Նա խոսում էր այն մասին, որ իրենց արտելին ռազմական պլան են տվել, բայց վարպետներ չունեն, պլանները թերակատարում են:

— Բա՛, տիկին Սոնա,— ասում էր նա,— բանակին հագուստ է պետք, իսկ մենք պլանները թերակատարում ենք: Ուստին խզուր ուղարկեցին, էստեղ ավելի շատ օգուտ կտար:

— Ո՞նց,— հետաքրքրվեց Վարսիկը:

— Էնենց, որ ուստի փոխարեն ով ասես էնտեղ կարող էր կռվել, համա էստեղ փոխարինող չունի:

Վարսիկը լսում էր ու մտածում: «Այո՛, Վաչեն ճիշտ է ասում, բանակին հագուստ է պետք: Այ, գալրոցում էլ միտինգ արեցին, կոչ արին՝ օգնել բանակին, փոխարինել գնացողներին:

Այ, գործելու առիթ... բայց կարո՞ղ եմ...»:

Եվ մի քանի օր Վարսիկը լուռ խորհում էր այդ մասին: Հետո նա պահած տեղից հանեց հայրիկի մկրատը, սանտիմետրն ու մատանոցը, ինքն իրեն երևակայեց արտելում աշխատելիս...

— Մա՛,— վերջապես մի օր սիրտը մոր առաջ

բացեց Վարսիկը,— ի՞նչ կլինի, եթե ես գնամ հայրիկի փոխարեն աշխատելու։

— Դո՞ւ,— մտածկոտ ու զարմացած արտասանեց մայրը։

— Այո՛... ես։ Կարող եմ չէ՞, մա՛... հիշո՞ւմ ես։

Մայրը շվոթված, անակնկալի եկած, բնազդաբար ուսերը թոթվեց չընչալով.

— Իսկ դպրո՞ցը... չէ՞ որ հայրիկդ ասաց՝ դպրոցը չթողնես։

— Ջեմ թողնի, մայրի՛կ. ես դպրոց գնում եմ ժամը 2-ից... մինչև 2-ը կարող եմ աշխատել...

— Իսկ դասե՞րդ,— կարծես ինքն իրեն բարձրաձայն հաշիվ էր տալիս տիկին Սոնան։

— Դասե՞ր... դասերս երեկոյան կսովորեմ... հը՞, մա՛։

— Ի՞նչ ասեմ, բալա, դո՛ւ դիտես։

Ու մայրիկի այտերի վրայով սկսեցին զլորվել արցունքները։

Վարսիկը լուռ փաթաթվեց նրան, և մայրը տեսավ, որ աղջկա ուսերը ցնցվում են զսպված հեկեկանքից։

***

Հաջորդ օրը վաղ առավոտյան Վարսիկը հագավ իր դպրոցական զգեստը՝ փողկապով, սովորական ժապավենն ամրացրեց մազերի մեջ, պայուսակն առավ ու պատրաստվում էր տնից դուրս գալու։

— Ո՞ւր,— հարցրեց մայրը, արդեն կռահելով նրա միտքը։

— Արտել։ Դեռ մի գնամ, մայրիկ, տեսնեմ ի՛նչ կա։

Մայրը լաւ թեքվեց, համբուրեց աղջկա մազերը, ապա հուզմունքը թաքցնելու համար սկսեց զբաղվել դռան վրայի ժապավենով:

Այդ ժապավենը... այո՛, հիշում է տիկին Սոնան, որ ամուսնին առանց այդ ժապավենի չէր պատկերացնում աղջկան:

Երբ Վարսիկը մատով արտելի մինչանցքը, սիրտն սկսեց անհանգիստ ու արագ բաբախել... Նա մի քանի անգամ հայրիկի հետ եղել էր այնտեղ... կամ եկել էր, երբ նա աշխատանքի էր եղել...

Իսկ այսօր առաջին անգամ՝ առանց հայրիկի:

Ահա և վարիչի կաբինետը: Վարսիկը դռան առաջ կանգնած՝ չէր համարձակվում բախել. բայց ինչ-որ մեկը նույն բոպեին դուրս եկավ վարիչի մոտից, և երբ դուռը բացվեց, Վարսիկը երևաց կարծես կաբինետի մեջ, ու երկու քայլ առաջ գնալով կանգ առավ... ասես լսում էր սեփական սրբոտի անսովոր զարկերը:

Վարիչը հեռախոսով խոսում էր ինչ-որ մեկի հետ.

— Այո... 90%-ի... քի՞չ է... Լհարկե, գիտեք, չէ՞... շատ լավ, շատ լավ...

Նա հեռախոսը կախեց ու նայեց Վարսիկին:

Նրա դեմքի արտահայտությունից Վարսիկն զգաց, որ աշխատում է մտաբերել իրեն ու չի կարողանում:

Վարսիկը երկու ձեռքերով պայուսակի կանթից բռնած գլուխը կախեց ու սկսեց ոտքի ծայրով խաղալ հատակի հետ:

— Դու ո՞ւմն ես ուզում, աղջիկս,— մեղմ ու սիրալիր խոսեց վարիչը:

Վարսիկը չլսելով՝ գլուխը բարձրացրեց, նայեց նրա ուսի վրայով [illegible] ժպտացող Սատլինին ու կմկմաց

— Ես վարպետ Արշակի տղին եմ...

— Հա՛... ախր ասում եմ մի տեղ տեսել եմ,— Նրա խոսքն ընդհատեց վարիչը ու ձեռքը մեկնեց:

Վարպետը, որ չէր սպասում նրա ձեռքին, այն մեկնած տեսնելով՝ դրեթե վայրջով մոտեցավ ու սեղմեց վարիչի ձեռքը...

— Նստիր, տղիկս... երբի մայրդ է ուզարկել: Է՛հ, էնքան ենք խառնվել գործերի ու պլանների մեջ, որ բոլորովին մոռացել ենք,— մեղավոր տոնով ասաց վարիչը ու հարցրեց.

— Ասա տեսնեմ, ինչպե՞ս ես:

— Շնորհակալություն...

— Հայրիկիցդ լուր չեկա՞վ...

Վարպետը լուռ, գլուխը բացասաբար շարժեց, հայացքը մի չա գլեպի ցած խոնարհած:

— Դա՛,— երկարացրեց վարիչն ու ասաց,— նո՛ւ... ասա, տեսնեմ, ի՞նչ էր ուզում մայրդ:

— Մայրս ոչինչ չի ուզում:

— Դո՞ւ ես ուզում:

— Այո՛:

— Ասա, տեսնեմ, տղիկս:

Վարպետը վարիչի սիրալիր տոնից սիրտ առած գլուխը բարձրացրեց: Նորից նրա հայացքը հանդիպեց պատից ժպտացող Ստալինի հայացքին, որը կարծես նրան ասում էր՝ «Ասա՛, ասա՛...»

— Ընկեր վարիչ,— սիրտ առած խոսեց Վարպետը,— ես եկել եմ աշխատելու:

Վարիչը կարծես լավ չլսեց նրա ասածն ու հարցրեց:

— Դո՞ւ... աշխատելո՞ւ:

— Այո՛... ես իմ հայրիկի տրհնանը գիտեմ... կարող եմ նրան փոխարինել...

Վարիչը ոչինչ չասեց: Նա կարծես մոռացավ

ասելիքը։ Վարսիկը լռությունից օգտվելով՝ ավելացրեց.

— Փորձեցեք, ընկեր վարիչ...

— Բայց դու սովորում ես չէ՞։

— Ես ժամանակ կունենամ։ Ինչքան որ կարող եմ...

Նրա խոսքն ընդհատեց ներս մտնող մի երիտասակ մարդ, որի վզով սանտիմետր էր գցած, իսկ քթի ծայրին դրված էր ակնոցը, ոնց որ Ուստա փիսոյի նկարում...

— Ահա՛,— ասաց նա արագ մոտենալով վարիչին։

— Նո՛ւ... ի՞նչ է ստացվում,— անհամբեր թեքվեց վարիչը դեպի նրա ցույց տված ձևերը։

— Տեսե՛ք. «կամաց-կամաց»։

Նա խոսելիս վարիչին նայում էր ակնոցների վերևից, որի պատճառով էլ ստիպված էր գլուխը չափից ավելի թեքել կրծքին։

— Ախր «կամաց-կամացի» ժամանակ չկա, վարպե՛տ։

— Ի՞նչ արած... ճար էլ չկա։

— Լա՛վ,— կարծես տխուր ասաց վարիչը։

Երբ ակնոցավոր մարդը բերած ձևերը ձեռքին շարժվեց դեպի դուրս, վարիչը կանչեց։

— Վարպե՛տ։

Վարպետը կանգ առավ, գլուխը թեքեց կրծքին ու քթին ամրացրած ակնոցի վերևից նայեց վարիչին։

— Ասա այս աղջկան էլ փորձիր...

Վարպետն առանց գլխի դիրքը փոխելու իր հայացքն հառեց Վարսիկին։

— Սրա՞ն,— շեշտեց նա թերահավատությամբ, ինչպես թվաց Վարսիկին։

— Այո՛, վարպետ Արշակի աղջիկն է... Ասում է՝ հոր արհեստը գիտի։

— Մե՞ր Արշակի։

— Այո՛։

— Հա՛... նման էլ է։ Դա արդեն ուրիշ բան է... կարող է պատահել, որ... գնա՛նք, աղջի՛կս։

***

Արդեն մեկ տարուց ավելի է, որ Վարսիկն աշխատում է արտելում։ Նա դարձել է բոլորի սիրելին՝ իր շնորհքով, օրինակելի աշխատանքով... Նա սիրելի դարձավ մանավանդ այն օրից, երբ բոլորն իմացան, որ Վարսիկը միաժամանակ սովորում է դպրոցում ու գերազանցիկ է։

Աշխատանքի առաջին շաբաթները մի փոքր դժվար էր... բայց հետզհետե ընտելացավ, իսկ այժմ արտելի առաջավոր աշխատողներից մեկն է։

— Պտուղը ծառի տակը կընկնի,— ասում էին արտելականները։

Իսկ Վարսիկը գլուխը կախ, լուռ աշխատում էր։ Նա շատ քիչ էր խոսում։ Ավելի շատ՝ մտքում դասերն էր կրկնում։

Ա՛յ, մի անգամ էլ (Վարսիկն այժմ կարմրելով է հիշում այդ օրը), երբ նոր էր աշխատանքի անցել, մեքենայի տակտի հետ հանձնարարված անգիրն էր կրկնում։

— Սիրադ որպես վառ տարուշան պահիր վա՛ռ,
Որպես դրոշ արնանման, պահիր վա՛ռ...

Հետո անգիրից անցավ աշխարհագրության դասին։ Դիմացի պատին մի մեծ քարտեզ կար փակցրած։ Նա երբեմն թռուցիկ հայացք գցելով քարտեզին կրկնում էր դասը... և հանկարծ ինչպիսի՜ խայտառակություն, Վարսիկը ճչաց։

— Կտրեցի՞ր,— մոտ վազեց աշխատողներից մեկը:

— Ոչինչ, ոչինչ,— ասաց Վարսիկը, կտրած ձեռքը թաքցնելով թևի տակ:

— Ինչպե՞ս թե «ոչինչ»... պետք է կապել չէ՞:

Բարեբախտաբար կարվածքը թեթև էր, ու Վարսիկը մի երկու օրից նորից աշխատանքի անցավ:

Դա առաջին օրերն էին: Այժմ բոլորովին այլ է: Նա առաջավորներից է, իսկ թիթեռանման սպիտակ ժապավենն էլի պահում է մազերի մեջ:

Արտելականները զգույշ ակնարկով հասկացրին Վարսիկին, որ նա հրաժարվի այդ թիթեռից, բայց նա մնաց անդրդվելի:

«Ո՛չ, չի հրաժարվի... չէ՞ որ դա հայրիկի ցանկությունն է եղել. ուրեմն Վարսիկը նրա ցանկությամբ էլ կդադարի այդ թիթեռը կրելուց... Հայրիկի՛ ցանկությամբ»:

Այնինչ տարիներն անցնում են, ու հայրիկից ոչ մի լուր չկա: Ռազմաճակատից ուրախալի լուրեր են գալիս... Հաճախ իրենց մոտ, արտելում թռուցիկ հավաքներ են ունենում, ողջունում են մեր բանակի հաջողությունները, նրա հերոսներին ու խոստանում՝ թիկունքի հերոսական աշխատանքով արժանի լինել նրանց:

Իսկ հայրիկից տեղեկություն չկա:

Արտելի վարիչը հաճախ այցելում էր ցեխերը ու միշտ նկատում էր Վարսիկին, խոսում նրա հետ:

— Հը՞, ինչպե՛ս ես, աղջիկս:

— Շնորհակալություն,— կարմրելով պատասխանում էր Վարսիկը:

— Աշխատելդ դասերիդ վրա շատ չի՞ ազդում...

— Ո՛չ, ընկեր վարիչ: Հասցնում եմ:

— Կեցցե՛ս: Եթե դժվարանաս, ինձ հայտնիր:

— Շնորհակալություն:

Լավ աշխատանքի համար արտելի մի քանի վարպետներ պարգևատրվեցին «Կովկասի պաշտպանության համար» մեդալով: Վարսիկը շատ զարմացավ, ապա ամաչեց, երբ իրեն էլ մեդալ հանձնեցին:

— Ախր՝ ինչո՞ւ ինձ... ես ի՞նչ եմ արել, որ...

Այս մասին դպրոցումն էլ իմացան, նկարը փակցրին պատի թերթում, գովեցին:

Իսկ հայրիկը չկա:

Երբեմն նա այնպե՛ս էր կարոտում հայրիկին, այնպե՛ս էր ուզում մոտը լինել, իր սիրած ձևով փարվել նրա վզովն ու այտը դնել նրա երեսին... Այդպիսի լոպեներին նա ինքնամոռացության մեջ, արտնեղելով, դիմում էր մորը.

— Մա՛, ինչո՞ւ հայրիկից տեղեկություն չկա:

Նրա հարցն ավելի էր հուզում առանց այն էլ թախծոտ մայրիկին...

Այդ ղղալով՝ Վարսիկը ղղջում էր իր հարցի համար ու մոտենալով մորը, փարվում էր նրան, համբուրում ու չչնջում ականջին.

— Կդա՛, մա՛, կդա՛...

Բայց ահա մի օր Վարսիկին կանչեցին ղինվոմիսարիատ ու մի թուղթ հանձնեցին:

— Հայրդ, աղջիկս, հերոսաբար ընկավ հայրենիքի պաշտպանության դիրքերում...

Վարսիկի աչքերը մթնեցին... Նա չկարողա-

ցավ ճչալ... կրաց, որ շենքը դլխին պատռում է ու իրեն հաղիվ դցեց մոտիկ աթոռի վրա...

Նրա աչքերից թափվող հորդահոս արցունքները մեղմեցին սրտի կրակը... քիչ հետո նա վեր կացավ տեղից... ու երբ զինկոմխարհատից դուրս էր դալիս, ձեռքը տարավ ու հանեց մազերի մեջ ամրացված ժապավենը... իսկ երբ մոտեցավ տանը, հանկարծ հիշեց մորը: Նա հենվեց պատին, սրբեց արցունքները ու ինքն իրեն հաշիվ տվեց. «Մայրիկը չի դիմանա... չպետք է ասել»: Նա կոմխարհատում ստացած թուղթը փաթաթեց բռի մեջ սեղմած ժապավենով ու աշխատեց որքան հնարավոր է անտարբեր ձևանալ:

Մայրը ոչինչ չնկատեց:

Վարսիկը դաղտնիքը հայտնեց միայն իր երկու մտերիմ ընկերուհիներին՝ Անուշին ու Նորային, մեկ էլ արտելի վարիչին:

— Վա՜խ, Վարսիկ ջան, ի՞նչ վատ բան է եղել,— շշնջաց Նորան:

Անուշը ոչինչ չասաց. լուռ դրկեց ընկերուհու ուսը:

— Միայն, աղջիկնե՛ր, մայրս չպետք է իմանա... դիտեք, սիրտը վատ է:

Իսկ արտելի վարիչը լուրն իմանալով, ծանր հառաչեց.

— Ավա՜ղ, չա՛տ ափսոս... վա՜յ, Արշակ ջան...

Ու Վարսիկը նկատեց, որ վարիչի աչքերը թաց դարձան:

— Խնդրում եմ այս մասին ոչ ոք չիմանա, կարող է մորս ականջը հասնել և...

Վարսիկի ձայնը խզվեց:

Արտելականները ոչինչ նկատել չէին կարող: Նրանք միայն զարմացան, երբ Վարսիկին տեսան

առանց ժապավենի... Իսկ մայրիկն առաջին անգամ աղջկանը տեսնելով առանց ժապավենի՝ և՛ զարմացավ, և՛ վշտացավ: Նա կուզեր, որ Վարսիկը շարունակ կրեր այն... Սակայն տիկին Սոնան չուզեց դստեր զգացմունքների մեջ մտնել... «Երեվի մեծացել է, անհարմար է զգում»,— ենթադրեց նա:

Եվ իրոք, ժապավենը հանելուց հետո Վարսիկը կարծես մի տեսակ փոխվել էր, մռայլվել ու հասունացել:

Մի երեկո, երբ Վարսիկն ինչ-որ գիրք էր փնտրում, նրա ձեռքն ընկավ հոր թողած անկետան: Վարսիկը վերցրեց այն ու նորից հուզվեց... Ինչո՞ւ ինքը պահեց այդ անկետան... ի՞նչ հույսով...

Ապա կարդաց անկետայում առաջարկված հարցերը...

Երկրորդ օրը նա նորից վերցրեց այդ անկետան, նորից կարդաց ու մտածեց.

«Լրացնե՞մ»:

Եվ մի քանի օր, ամեն երեկո կարդում էր անկետայի հարցերը:

Մի անգամ, արտելում, ընդմիջման ժամին Վարսիկը մոտեցավ պարտկազմակերպության քարտուղարին:

— Ընկեր Սիրուշ:

Քարտուղարը նախաճաշը ընդհատելով դարձավ դեպի նա.

— Ի՞նչ կա, Վարսիկ ջան:

— Ինչո՞ւ ինձ անկետա չեք տալիս:

Քարտուղարը կարծես զյուտ արավ: Նրա աչքերը մեծացան ու շտապ հարցրեց:

— Ինչո՞ւ... դու քանի՞ տարեկան ես:

— Տասնութ:

— Ճի՞շտ, էդ ի՞նչ լավ է։ Դե, ասի... Բա ինչո՞ւ չես ասել։

Վարսիկն ամոթխած ժպտալով նրան մեկնեց լրացրած անկեռան։

— Էս ո՞ր տեղից։

— Հայրիկս էր բերել։

— Հայրի՞կդ... Ա՛... ուրեմն դու բոլոր հարցերում փոխարինո՞ւմ ես նրան,— կես կատակով խոսեց քարտուղարն ու հարցրեց.

— Ովքե՞ր են երաշխավորներդ։

— Ունեմ։

— Լավ, ոչի՛նչ։ Դու կոմերիտական ես... ռայկոմը՝ մե՛կ։ Մեկն էլ ես կտամ, մեկն էլ... հեշտ է։ Ո՞վ չի երաշխավորի քեզ։

***

Ռազմաճակատից եկող լուրերն ամենքի հետ ուրախացնում էին նաև Վարսիկին։ Բայց նրա ուրախության մեջ միշտ մի թախիծ կար, ինչպես ուրախ օրվա պայծառ երկնքում մութ ամպի մի կտոր... դա հայրիկի մահվան լուրն էր։ Վարսիկն աշխատում էր ինքն իրեն մխիթարել նրանով, որ հայրը չատերից մեկն է, հերոսներից... Որ նա՝ իր հայրը, զոհվեց հայրենիքի համար։ «Ջէ՞ որ մարդ մի անգամ է մեռնում,— մտածում էր Վարսիկը,— հայրիկը հերոսական մահով գնաց»։ Ուրեմն ինչո՞ւ ափսոսել, ինչո՞ւ չպարծենալ, որ նա դիտակցական մահով անմահացրեց իրեն՝ ինչպես գրքում կարդացել է մի մեծանուն մարդու խոսքեր։

Բայց հանկարծ Վարսիկի առաջ կանգնում էր մոր կերպարանքը՝ հայրիկին սպասող մոր։ Ա՛յո՛, նա դեռ սպասում է, նա դեռ ոչինչ չգիտե... և չի՛ էլ իմանա։ Վարսիկը նրան երբե՛ք, երբե՛ք չի

հայտնի: Եվ մայրիկը կմնա մի՛շտ հայրիկին սպասելով:

Վարսիկին տանջում էր հատկապես այն, որ մայրիկը երբեք հույսը չէր կտրում: Նա շարունակ հայրիկի դալու մասին էր խոսում: Իսկ մի օր, երբ Վարսիկը դասից տուն եկավ, մորը գտավ արտակարգ ուրախության մեջ: Նրա ամենօրյա թախծոտ դեմքը պայծառացել էր և, թվում էր, թե նրա տրամադրության վրա իշխող ձմեռը տեղի է տվել պայծառ, կենսուրախ գարնան:

— Վարսիկ ջան,— դիմավորեց նրան մայրը,— հայրիկից տեղեկություն եմ ստացել:

— Ո՞նց թե,— անակնկալի եկած չշնչաց Վարսիկը, և նույնիսկ պայուսակն ընկավ ձեռքից:

— Բա՛... մի մարդ է ֆրոնտից գրել: Հորդ հետ միևնույն հիվանդանոցումն է պառկած եղել:

— Իսկ քեզ ո՞վ ասաց,— հարցրեց Վարսիկն ու ծնկների մեջ թուլություն զգալով՝ նստեց աթոռին:

— Նամակ գրող մարդու կինն ասաց... էսօր չուկայից գալիս էդ կինը էստեղ՝ մեր դռանը պատահեց ու հարցրեց մեր տունը... սիրտս վեր թռավ: Ասի՝ կա՛, չկա՛, հայրիկից տեղեկություն կա... ու իսկապես...

Նա այնքա՜ն ուրախ էր, որ չէր նկատում, թե աղջիկն ինչ ապրումների մեջ է: Մի այն տեսնելով, որ նա իր ուրախությանը չի արձագանքում, չշնչաց.

— Վարսիկ ջա՛ն:

Աղջիկը լուռ ու թախծոտ նայեց մորը:

— Հիվանդ հո չե՞ս:

— Ոչի՛նչ... գլուխս է ցավում... կանցնի...

— Վա՛յ, քոռանամ ես: Ուրախացել եմ ու ինձ կորցրել:

Այս ասելով նա սկսեց սեղան պատրաստել, որ աղջիկը ճաշի։

— Մա՛։

Այժմ մայրը լուռ նայեց աղջկան, բայց ուրախ ժպտաց։

— Դու այդ կնոջ հասցեն վերցրի՞ր։

— Չէ՛։

— Ինչո՞ւ։

— Զգիտեմ, ճիշտն ասած, էնքան չփոթվեցի, որ դնալուց հետո էդ մասին մտածեցի...

— Իսկ չասա՞ց՝ նամակը երբ է գրված։

— Չէ՛, չասաց։

Վարսիկը գլուխը ափերի մեջ առավ ու լռեց։

— Ինչի՞, մեկ չի՞, Վարսիկ ջան։

— Մեկը՝ մեկ է... բայց եթե այդպես է, ինչո՞ւ հայրիկը նամակ չի գրում։

— Հը՞,— մտածկոտ շշնջաց մայրը,— դե, ի՞նչ կա որ... քիչ կա՞ն, որ չեն գրում։

«Հայրիկը կգրեր, ինչպես գրեց առաջին վիրավորվելուց հետո»,— մտքում ասաց Վարսիկն ու այլևս չխոսեց։ Նա ճաշում էր ու մտածում, ենթադրություններ անում։ Եվ եկավ այն եզրակացության, որ այդ կնոջ ասածը հին բան է, վերաբերում է հայրիկի առաջին վիրավորվելուն։

Եթե հայրիկը ողջ լիներ, անպայման կգրեր։ Նա, իհարկե, այս մտքերը թաքցրեց մորից։ Բայց ուրախալի էր, որ մայրը հուսադրվեց ու անհամբեր սպասում էր ամուսնու վերադարձին։ «Եվ այսպես սպասելով էլ աչքը ճամփին կմնա»,— մտածում էր Վարսիկը։

Իսկ ժամանակն անտարբեր սահում էր առաջ։

Ու այնուհետև, երբ իրենց դուռը ծեծող էր լինում, մոր սիրտը վեր-վեր էր թռչում։

— Աղջիկս,— ասում էր նվաղած ձայնով,— տես, հո հայրիկդ չի՞...

Վարսիկն արդեն պարտության անդամության թեկնածու էր ընդունվել: Մնում էր տոման ստանալը: Այժմ մեկ ամսով արձակուրդ են տվել արտելից, որպեսզի պատրաստվի, հաջողությամբ հանձնի հասունության ատեստատի քննությունները:

Դպրոցի դիրեկտորը չահաջողված է, որ Վարսիկը մեդալով ավարտի... Ու Վարսիկն էլ պայքարում է դրա համար: Հենց այդ օրերին կանչեցին ռայկոմ, հանձնեցին թեկնածուական տոմսը և ավելի ոգևորեցին նրան:

Որքա՜ն տուխիներ կան ուրախանալու...

Մի քանի օր հետո պարզվեց, որ Վարսիկը դպրոցն էլ ավարտում է մեդալով... բայց արծաթե մեդալով... «Ի՞նչ կա որ... թող հայրիկը դար, թեկուզ հենց առանց մեդալի ավարտեի»: Բայց նա ուրախ էր, որ հայրիկի կամքը կատարվեց՝ ինքն ավարտեց միջնակարգ դպրոցը:

Վարսիկի հասունության ատեստատը և մեդալը հանձնեցին հատուկ հանդիսավորությամբ: Երբ դրանք ստացած տուն եկավ, այլևս չկարողացավ պապել իրեն: Նա գլուխը դրեց ատեստատի վրա ու լացեց՝ երկա՜ր ու երկար... Մայրը չէր կարող հասկանալ նրա լացի բուն պատճառը: Նա բնական էր համարում աղջկա լացը. դպրոցն ավարտել է, հիշում է հորը:

Նա նստեց աղջկա մոտ ու նրա մազերը շոյելով, սկսեց մխիթարել:

— Լա՛վ, Վարսիկ ջան... էսօր դու պետք է ուրախ լինես... չէ՞ որ շնորհքով կատարեցիր

հայրիկիդ խնդիրը՝ ամարտեցիր դպլոցը, էն էլ մեդալով: Կգա հայրիկդ, կիմանա, կուրախանա...

Այս խոսքերն ասելու ժամանակ մոր աչքերից էլ էին արցունքներ գլորվում:

Դուռը բախեցին:

Մոր սիրտն էլի վեր թռավ. «Չլինի՞ թե...» ու նա չտասով մոտեցավ դռանը: Վարսիկի ընկերուհիներն էին՝ Նորան, Անուշը և մի քանի ուրիշները: Նրանք եկել էին շնորհավորելու իրենց ընկերուհուն: Նրանք իրենց հետ ծիծաղ, ուրախություն բերին ու լցրին սենյակը: Սկսեցին ուրախանալ, կատակել, նվագել, երգել, արտասանել:

Վարսիկն աշխատում էր ուրախ լինել և այդ նրան հաջողվում էր: Նա շատ էր սիրում երգել, բայց երգելու համար ձայն չուներ: Ինքը ընկերուհիներին երգել, իսկ ինքը դրա փոխարեն իր սիրած բանաստեղծություններն էր արտասանում և արտասանում էր այնպիսի՛ զգացմունքով: Ընկերների խնդրանքով նա արտասանեց իր սիրած պոետի ստեղծագործություններից մի յուրաստակ մանուած, որ ինքն էր հորինել:

«Ես լաց չեղա...
Մ՛ի, քնարականնե՛ր.
Կարծում եք, թե չունե՞մ ես արտասուք»:

Այսպես հանկարծ տոնը փոխելով, գլուխն ավելի վեր բարձրացրեց ու հայացքը դեպի անորոշություն դարձրած, դոշեց.

«Գերմանացին իր որսը խորովել դեռ չդիտե՛ր,
Մենք ստվածներ էինք ճուլում
Ու վայելում գինի»...

Հետո բառնցքը սեղանի անկյունին խփելով, շարունակեց, կարծես ինքնամոռացության մեջ.

«Կռվեցեք այնպես, որ սաղավարտը Վարդանի գլխանոց չտաք, որ տմպ չառնի իր ծեր գլխին Մա-

սիան՝ ամոթապարտ... Իսկ մինչ այդ, սիրտ իմ, սանձիր քո ծոմն արեկոծ...», ու լռեց:

Ընկերները հիացած ծափահարեցին:

— Կեցցե՛ս, Վարսիկ Ջան... ինչ լա՛վ ես ասում:

— Հիանալի՛ է...

Վարսիկը թախծոտ ու ամոթխած ժպիտով նայում էր նրանց ու դլխով շնորհակալություն հայտնում...

Ընկերուհիները բավական երկար մնացին: Նրանք տիկին Սոնայի պատրաստած համեստ սեղանի շուրջը նստած խոսեցին իրենց ապագայի մասին, թե ով ի՞նչ բարձրագույն դպրոց է դնալու... Այնուհետև խոսեցին պատերազմի մասին, լսեցին Սովետական ինֆորմբյուրոյի հաղորդագրությունը, ուրախացան. ասա դարձան դպրոցական կյանքին... խոսեցին իրենց տասը տարվա ընկերության մասին, դասատուների մասին...

Նրանք այդպես նստած, հիշեցնում էին գարնան ծառի վրա ճռվողող թռչունների մի ամբակալի խումբ:

Արդեն բավական ուշ էր, երբ ընկերները հեռացան:

Տիկին Սոնան շատ ուրախ էր, որ աղջիկները եկան և Վարսիկին հանեցին իր թախծոտ տրամադրությունից: Աղջիկների դնալուց հետո նա անկողին պատրաստեց և պառկեցին քնելու:

Պառկեցին, սակայն ոչ մեկը քնել չկարողացավ... Վարսիկի աչքին քունը մոտ չեկավ, իսկ տիկին Սոնան լուռ, առանց խոսելու, մթության մեջ դդում էր աղջկա արթուն լինելը և ինքն էլ չէր կարողանում քնել... Նա չէր ուզում, որ Վարսիկն իմանար, թե ինքն արթուն է: Սակայն Վարսիկն էլ դդում էր մոր արթուն լինելն ու աշխա-

տում էր, որ մայրն այդ չիմանա, ու քնած էր ձևանում...

Դրսից դուռը ծեծեցին:

Ո՞վ կարող է լինել, երբ փողոցում այդ ուշ ժամին երթևեկելն արգելված է: Տիկին Սոնան գլուխը լուռ բարձրացրեց.

— Սոնա՞,—լսվեց դրսից...

Վարսիկի մարմնով սարսուռ անցավ: Ճիշտ այդ ձևով հայրիկն էր դուռը բախում ու ձայն տալիս:

Տիկին Սոնան լույսը վառեց: Դուռը երկրորդ անգամ բախեցին: Վարսիկն արագ վեր թռավ տեղից, ձեռքն ընկած շորը շտապ գլուխը գցեց և թևերն արագ անցկացրեց... Այդ միայն վայրկյաններ տևեց, իսկ տիկին Սոնան հետևեց նրա օրինակին, ու երբ գլուխը շորի մեջ էր հագցրել, դուռը երրորդ անգամ ծեծեցին ու լսվեց.

— Սո՛-նա...

— Հորդ ձայնն է,— առանց թևերը հագնելու, չչնչաց մայրն ու քայլեց դեպի դուռը:

— Ո՛չ,—ճչաց Վարսիկը: Սպասի՛ր, նա չի:— «Գուցե երազի մեջ եմ»,— մտածեց Վարսիկն ու ամուր կամթեց իրեն...: «Զէ՛, երազ չի՛...»

— Մա՛,— կարծես իրեն կորցրած ճչաց Վարսիկը,— ա՛խր... չի՛ կարող պատահել... ա՛խր...

— Վարսիկ ջան, ե՛ս եմ, ե՛ս... դուռը բաց,— լսվեց վաղուց չլսված, այնքա՛ն ծանոթ ու սիրելի ձայնը:

Վարսիկը խելահեղ վազեց դեպի դուռը, ճամփին աղմուկով ցած գցելով աթոռը ու երբ այն բացեց, իր առաջ լուսնյակի լույսով տեսավ զինվորական հագուստով մի տղամարդու, որը ժպտում էր մտերիմ, հարազա՛տ ժպիտով: Վարսիկին այդ ամենը պատրանք թվաց:

— Հայրի՞կ,— չընչաց նա թերահավատությամբ ու ետ քաշվեց:

Երբ գինովորականը մոտավ տուն, Վարսիկը փորձեց ճչալ, բայց չհասկացավ՝ ինչ կատարվեց իր հետ: Ընկավ հոր գիրկն ու իր սիրած ձեռով բազուկները փաթաթեց նրա վզով, բայց որովհետև հայրիկը կանգնած էր, երեսը երեսին չհասավ: Նա սկսեց հեկեկալ: Հայրը դրկեց նրա մեջքը ու շրթունքները դրեց աղջկա փարթամ մազերին:

Վարսիկը հեկեկում էր, երեսը սեղմած հոր կրծքին, որի վրայի մեդալներն ու շքանշաններն իրենց սառնությունով շոյում էին Վարսիկի դեմքը: Նա ուզում էր, որ հայրիկն իրեն պինդ դրկի, ամուր, շատ ամուր ողմի կրծքին... Այնինչ հայրիկը միայն մեկ ձեռքով էր դրկել Վարսիկին:

Աղջիկը գլուխը ետ քաշեց ու տեսավ, որ հոր բլուզի աջ թևը դատարկ դրված է գոտու տակ...

***

Հաջորդ երեկոյան վարպետ Արշակի տունն ասեղ գցելու տեղ չկար: Եկել էին բոլոր քաջերկամները, ծանոթները, Վարսիկի աշխատանքի և ուսման ընկերները և նույնիսկ դասատուներից մի քանիսը:

Ծիծաղ, երգ, կատակ, ուրախություն խառնվել էին իրար: Խմում էին հաղթողների կենացը, մեծարում էին զոհվածների հիշատակը, նշում էին թիկունքի լավ աշխատանքը:

Երբ հերթը հասավ Վարսիկի կենացին, խոսել ցանկացողների թիվն ավելի մեծացավ: Առաջինը խոսեց արտելի վարիչը, ապա դպրոցի դիրեկտորը,

հետո ընկերները, ընկերուհիները... Ամենքը նշում էին նրա օրինակելի աշխատանքը... Իսկ Վարսիկն ամոթից չիկնած դլուխը թաքցրել էր մոտը նըստած ընկերուհու թիկունքում: Նրա կրծքին չողում էր «Կովկասի պաշտպանության համար» մեդալը:

— Մի խոսքով փոխարինող,— ժպտալով ամփոփեց վարպետ Սրշակն ու աղջկան դառնալով, ասաց.

— Ես քեզ միշտ պատկերացրել եմ այնպես, ինչպես հիմա նկարագրում են: Դու նույն Վարսիկն ես, նույն լավ աղջիկը... Միայն մեծացել ես ու հրաժարվել սպիտակ թիթեռ ժապավենից:

— Չէ՛, հայրիկ, ես...

Այս խոսքը կիսատ թողնելով Վարսիկը ելավ տեղից, գնաց, գտավ թիթեռ ժապավենը, հանեց նրա մեջ փաթաթած թուղթը, ապա ժապավենը նորից մազերի մեջ ամրացնելով մոտեցավ սեղանին ու ասաց.

— Սիրելի բարեկամներ, ուսուցիչներ, աշխատանքի և ուսման ընկերներ: Ձեզ հայտնի չէ, թե ես ինչու դադարեցի այս ժապավենը կրելուց: Ես սա հանեցի այն օրից, երբ ստացա սհա այս թուղթը...

— Ա՛յ թե ինչ,— զարմացավ վարպետ Սրշակը, կարծես ինքն իրեն մտաբերելով, թե ինչ է տեղի ունեցել:— Նշանակում է, երբ ես վիրավորվել և ուրիշ զորամաս եմ ընկել, ինձ սպանված են համարել:

— Այժմ ես այս ժապավենը նորից կկրեմ և նրանից կհրաժարվեմ միայն հայրիկի ցանկությամբ,— ավարտեց Վարսիկը:

Նա նայեց շուրջը, նայեց ուրախ ժպտացող

մորը, ընկերներին... Կարծես ոչինչ չէր փոխվել։ Միայն հայրիկի բլուզի դատարկ թևը և հոր ու աղջկա կրծքներին շողացող մեդալներն ու չքանշաններն էին հիշեցնում, որ նրանց գլխով անցել էր մի հերոսական պատմություն։

1948 թ.

Խմբագիր՝ ԱՐՄ. ԹԱՄԱԶՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ս. ԲԱԲԱՅԱՆ

ՎՖ 02023. պատվեր 158. տիրաժ 4000:
Տպագր. 2 մամուլ. հեղին. 1,5 մամուլ:
Հանձնված է արտադրութ. 12/IV 49 թ.:
Ստորագրված է տպագր. 20/V 49 թ.:

Հայպետհրատ. Վարչության
№ 3 տպարան, Ալավերդյան
№ 85, Երևան. 1949 թ.:

ԳԻՆԸ ՝ Ռ. 50 ՝